

30.

Ուխտագնացություն դեպի հայկական
ազատագրված տարածքներ
հայեր, վերադարձնեք հայրենիք*

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՆՅԱՆ

Անցյալ տարվա (2002թ.) փետրվարից ՀՀ-ում և
Արցախում գործում է «Ազատագրված տարածքների պաշտպանություն» (այսուհետև՝ ԱՏՊ) հասարակական նախաձեռնությունը, որի համակարգողն է նախկին լիբանանահայ, Շուշիի երեմնի առանձնակի գումարտակի հրամանատար, 1990-ից հայրենի հողի վրա հաստատված ժիրայր Սեֆիլյանը: ԱՏՊ-ի հիմնական նպատակը անհաշվելի զոհողություններով Հայոց արևելյան կողմերի ազատագրված տարածքների համակողմանի վերահայացումն է՝ հիմնովին մերժելով անգամ դրանք վերադարձնելու մասին գաղափարը: ԱՏՊ-ին անդամակցում են ազատամարտի զորահրամանատարներ և մասնակիցներ, գիտնականներ, արվեստագետներ, գրողներ, հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ, ՀՀում և Արցախում հաստատված նախկին սփյուռքահայեր:

Այս տարվա գարնան սկզբին ԱՏՊ-ն ծրագրեց ուխտագնացություն դեպի Բերձորի (նախկին Լաշխն) շրջան և հարավի ազատագրված տարածքներ՝ հետապնդելով երկու նպատակ: Ուխտագնացության մասնակիցների և հատկապես լրագրողների միջոցով Հայ Հանրությանը տեղեկացնել այդ տարածքների այսօրվա իրական վիճակի մասին և փնտրել ու որոշել ԱՏՊ-ի ծրագրած 100 ընտանիքների վերաբնակեցման վայրը:

Ուխտագնացությունն սկսվեց ուրբաթ, 2002-ի հունիսի 21-ին և տևեց երեք օր: Շուրջ 40 մասնակիցներ՝ լրագրողներ, գիտնականներ, ուսանողներ, հասարակական գործիչներ և ուրիշներ * Նախապես լույս է տեսել արևմտահայերենով՝ ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՆՅԱՆ, ԴՐԱՎԵՐ ՂԵՂԻ ՄՐՑԱԽ: ԿՐԱՏԱՐԱԿԻՇ՝ ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ: ՀԱԼԵՊ, 2003: Արևելահայերեն տպագրվում է առաջին անգամ, կրծատումներով:

ուղեղիքնեցին հարավ՝ ՀՀ-ում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության շենքի առջևից հունիսի 21-ի առավոտյան։ Ուխտագնացների շարքում էին «Ղարաբաղ» կոմիտեի երեքմանի անդամ, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը տիկնոջ և որդու հետ, բնագետ Աշոտ Գևորգյանը, հայկական ճարտարապետական հուշարձանների նվիրյալ հետազոտող Սամվել Կարապետյանը, ՀՀ ազգային անվտանգության նախկին նախարար՝ գեներալ Էդուարդ Միմոնյանը տիկնոջ հետ և շատ ուրիշներ։

Մինչև Բերձոր ուխտավորները պարբերաբար կանգ էին առնում հանգստանալու համար։ Նկատելի էր, որ Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի Գորիս-ՀՀ-ի միջազգայնորեն ճանաչված սահմանի շուրջ 20 կիլոմետրանոց հատվածը նորոգված չէր, թեև հայտարարվել է, որ այն ամբողջովին նորոգվել է «Համայն հայության միջոցներով» (այս մասին տեղեկացնում են նաև Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի վրա տեղադրված մեծ ցուցանակները)։ Այսուհետեւ ճանապարհի ՀՀ-ի պետական սահման-Ստեփանակերտ հատվածը նորոգված է հրաշալիորեն և բարեկարգ տեսք ունի, իսկ Բերձորի և Ստեփանակերտի ճանապարհները, մայթերն ու հրապարակներն ավելի բարեկարգ տեսք ունեին, քան Երևանինը։

Բուն ԼՂՀ-ի սահմանը խորհրդանշող Աղավնագետի կամրջին հասանք մոտավորապես ժամը 17:00-ին։ Կամրջին չհասած՝ անմիջապես ձախ կողմում՝ մի բարձրության վրա, կանգնած է Սուրբ Նահատակների նորակառույց մատուռը՝ բազալտե քարերով։ Այն կանգնեցրել է Պարույր Հայրիկյանի «Ազգային ինքնորոշում միավորումը»՝ ի հիշատակ այս շրջաններում Հիմնված 1, 2, 3, 4 Ահ-Մավան բնակավայրերի շուրջ 50 նահատակ վերաբնակիչների, որոնք աղբբեջանցիների ձեռքով զոհվեցին հիմնականում Հողանցում (նախկին Ղոչազ) 1992-ին՝ զինվորական թույլ կարգապահության պատճառով։

Կամրջից անմիջապես հետո՝ աջ մասում, ԼՂՀ ավտոտեսչության շենքն է, որը ծառայում է նաև որպես «մաքսատուն» և «սահման»։ Աղավնագետի հոսանքն ի վար՝ գետի հարավ, ձգվում է գետի հովտում ծվարած և հրաշալի բնություն ունեցող Աղավնո (նախկին Զաբուղ) գյուղը։ Աղավնոն առաջին վերաբնակեցված բնակավայրն է, որին հանդիպում ենք ԼՂՀում։ Այսուհետ-

դերձ, այն վերաբնակեցված է ոչ լրիվ, և այստեղ-այնտեղ աչքի են ընկնում աղբբեջանցիների տների ավերակներ:

Ժամը 17:15-ին հասնում ենք Բերձորի սկզբնամասում գտնվող Սուրբ Համբարձում եկեղեցին, որը ևս կառուցված է մուգ մոխրագույն բազալտե քարով: Եկեղեցու մուտքի մոտ ուխտավորներին դիմավորում են Քաշաթաղի շրջանի հոգևոր հովիվ՝ Հոգեշնորհ Տեր Աթանաս Վարդապետ Մովսիսյանը, իր օգնական Արա Սարկավագի հետ, Քաշաթաղի վարչակազմի ղեկավար, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Ղարաբաղ» Կոմիտեի երրեմնի անդամ, պատմաբան Ալեքսան Հակոբյանը վարչակազմի ղեկավարի տեղակալ Քոսակյանի հետ, Բերձորի գլխավոր բժիշկ, ազատամարտի մասնակից, վիրաբույժ Արցախ Բունիաթյանը, վարչակազմի սոցիալական ապահովության և առողջապահության բաժնի պետ Գարեգին Ղազարյանը, կրթության, մշակույթի և սպորտի բաժնի տեսուչ, «Ազատե» կրոնա-բարեգործական կազմակերպության ծրագրերի ղեկավար, փիլիսոփա Աշոտ Պետրոսյանը և շատ ուրիշներ: Թե՛ բերձորցիների և թե՛ ուխտավորների համար այս հանդիպումը վերածվում է տոնի:

Ա. Համբարձում եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1996թ. մարտի 3-ին, իսկ օծումը՝ 1998թ. մարտի 31-ին:

Հայր Աթանասը ևս ողջունում է ներկաներին, հաջողություն մաղթում ուխտավորների առաքելությանը և հավուր պատշաճի խոսք արտասանում եկեղեցում:

Նա շեշտում է. «Սա մե՛ր հողն է, մե՛ր ծննդյան վկայականը» ու կոչ է անում զգաստության, միաբանության, սիրո, ազգովի՞ն արթնության: Նա դրվատում է Հայ եկեղեցու ազատագրական առաքելությունը դարերի ընթացքում:

Եկեղեցու ուղևորվում ենք հոգևոր-մշակութային կենտրոններ, որոնք տեղ են գտել մեկ շենքում: Այս համալիրի երկրորդ հարկը զբաղեցնում է Բերձորի քաղաքային գրադարանը, որի վարիչ տ-ն Սոնա Հովեյանը (Արցախ Բունիաթյանի տիկինը) հաղորդում է մանրամասն տեղեկություններ գրադարանի մասին: Այն բացվել է 1998թ. օգոստոսի 23-ին, ներկայումս ունի 800 մշտական հաճախորդ և 10 հագար անուն գիրք: Սկզբնական շրջանում թերեյան մշակութային միությունը երևանում կազմակերպեց գրքերի նվիրահավաք գրադարանի համար: Ցավով նկատում ենք,

որ ամբողջովին բացակայում են սփյուռքի հրատարակությունները: Գրադարանը երևանյան հիմնական թերթերը ստանում է մերկօրյա ուշացումով:

Գրադարանին նվիրում եմ իմ կազմած «Ոգուն չապաւինելու արդիւնքը» գիրքը և խմբի հետ բարձրանում երրորդ հարկ, որի սրահի մեջ պատսպարվել է Քաշաթաղի շրջանի երկրագիտական թանգարանը, իսկ մյուս երկու սրահներում՝ պատկերասրահը: Թանգարանը բացվել է Բերձորի ազատագրության 4-ամյակի օրը՝ 1996թ. մայիսի 18-ին: Նրա բոլոր ցուցանմուշները հավաքվել կամ հայտնաբերվել են բացառապես Քաշաթաղի շրջանից: Կատարվել են Հնագիտական պեղումներ, և կան շոշափելի արդյունքներ. այսպես՝ Մելիքաշեն (Նախկին Սուլթանքենթ) գյուղի տարածքից հայտնաբերվել են Ք. ա. 3-րդ հազարամյակով թվագրվող կավե զարդեր, որոնք ցուցադրվում էին: Կային նաեւ ձեռակերտ գորգեր, կարպետներ, պղնձե կենցաղային առարկաներ, դրամներ և այլն: Աղբբեջանցիների թողած տնային առարկաների մեջ կային հայերեն արձանագրություններով (պատրաստման տարեթիվ, արհեստագործ վարպետի և (կամ ստացողի) անուններ) իրեր, որոնք աղբբեջանցի-թուրքերի հափշտակիչ ու ավագակային նկարագրի իրեղեն ապացույցն են: Այսօր հայոց ազգային հարստության այդ մասնիկները վերագտել են իրենց իսկական տիրոջը:

Պատկերասրահը բացվել է քաղաքի ազատագրության հնգամյակի օրը: Ունի մոտ 400 նկար՝ գրեթե բոլորը յուղաներկ, որոնց շարքում հինգ կտավ Գառզուից: Պատկերասրահի 32 գործերի ցուցահանդեսը կազմակերպվել են 2-3 տարի առաջ: Բոլոր գործերը, բացի մեկից, պատկանում են Հայ արքեստագետների: Կան նաև շուրջ 20 փոքր քանդակներ: Հավաքածուն կազմավորվել է Հիմնականում ՀՀ մշակույթի նախարարության արվեստի վարչության և Հայաստանի պետական պատկերասրահից ստացված արվեստի գործերով: Կան նաև անհատ նկարիչների նվիրատվություններ:

Նույն համալիրի երկրորդ հարկում գտնվում է մեկ այլ հոգեսոր-մշակութային հիմնարկ՝ «Արցախյան ազատամարտի փառքի սրահը»: Այստեղ ցուցադրվում են արցախյան շարժման և արցախյան ազատամարտին վերաբերող զանազան նյութեր՝ լուսանկարներ, փաստաթղթեր, մամուլի հրապարակումներ նահա-

տակների և հերոսների մասին, գրքեր և այլն:

Մեր ուխտագնացության ընթացքում համոզվեցինք, որ Բեր-ձոր քաղաքը հարյուր տոկոսով և առաջին հերթին, հոգեսոր ոլոր-տում վերահայացված հայրենի տարածք է:

Այս համալիրից ուղեսորվում ենք մեկ այլ հոգեսոր կենտրոն՝ «Խաղաղության հուշահամալիր»: Այն բացվել է այս տարվա մա-յիսի 18-ին՝ քաղաքի ազատագրության տասնամյակի օրը և գտն-վում է քաղաքի կենտրոնական հրապարակին անմիջապես կից՝ մոտ 30 մետր բարձրությամբ մի բլրի վրա: Այստեղ կարելի է բարձրանալ հարյուրից ավելի աստիճաններով, որոնց ձախ մա-սում տեղադրված են չորս խաչքար: Առաջինը՝ անմիջապես աս-տիճանների սկզբին, ունի «1999 ՌԶՂԹ - Խաղաղութեան խաչ-քար» արձանագրությունը՝ դասական ուղղագրությամբ: Մրա շի-նանյութը հայկական բաց սրճագույն տուֆն է: Հաջորդը բազալ-տե խաչքար է՝ նվիրված Քերձորի ազատամարտում զոհված Սե-րոբ Հաննեյանի հիշատակին: Նրա պապը հայրենագարձվել է Քե-սապի (Սիրիա) Գարատուրան գյուղից 1947թ.: Այս խաչքարը տե-ղադրված է նահատակի վշտակիր մոր կողմից և ունի հետեւյալ արձանագրությունը՝ «Սերոբ Հաննեյան - նստած սահմանում(՝) մորս էի հիշում - 1972 - Լաշին»: Երրորդ խաչքարը ևս բազալ-տից է՝ պատվանդանին քանդակված «Կապանցիները՝ կապանցի նահատակների անմար յիշատակին» արձանագրությամբ: Շարքի վերջին՝ չորրորդ խաչքարը շատ գեղեցիկ և նրբահյուս, բաց սր-ճագույն տուֆով կերտված խաչքար է: Այն հին ժամանակների գործ է և տեղադրված է հին պատվանդանի վրա, ուր քանդակված է «Շուշիի հերոսամարտի 50 նահատակներին ՌԶՂԶ (1996)»: Բուն հուշահամալիրը գտնվում է աստիճանների վերջում՝ բլրի գագաթին և բաղկացած է ձախին կանգնեցված մեկ բազալտե խաչքարից և գիմացը կողք-կողք բարձրացած, թեք, Ծիծեռնա-կաբերդի հուշարձանի պատերը հիշեցնող բազալտե երեք պատե-րից: Խաչքարը կանգնեցված է այս տարի և ունի երկար արձա-նագրություն. «Քաշաթաղի առաջին պետնախարար, Հայաստանի ազգային հերոս Վազգէն Սարգսեանի լոյս յիշատակին Քաշաթա-ղի ժողովուրդը կանգնեցրեց այս խաչը իր սուրբ հողում նահա-տակուած հայորդիների անունները յաւերժացնող Խաղաղութեան յուշարձանում թուին ՌՆԾԱ 2002»: Երեք պատերի ներքերի մասե-

բում քանդակված են Քաշաթաղի շրջանի ազատագրական մարտերի ընթացքում զոհված 330 նահատակների անուն-ազգանուններն ու նահատակության տեղանունները՝ իրենց հայկականացված ձևերով։ Յուրաքանչյուրի վերին աջ անկյունում տեղադրված է հայկական մի քանդակ. այսպես՝ առաջին պատին՝ խաչքար, երկրորդին՝ կենաց ծառ, երրորդին՝ Հավերժության սկավառակ՝ «Խաղաղութիւն ամենեցուն – PAX (անընթեռնելի մեկ բառ)» արձանագրությամբ։ Առաջին և երրորդ պատերի ներքեւի մասերում՝ նահատակների անուններից առաջ, կան համապատասխանաբար հետեւյալ արձանագրությունները. «1992-1993 – թաղեցեալք լինիմք եւ ոչ խոնարհիմք» և «1992-1993 – թիշտակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Մի քանի խոսք ևս Բերձորի մասին:

Բերձոր (նախկին Լաչին) քաղաքը 1992թ. փետրվարին ազատագրված Խոջալուից և մայիսի սկզբին ազատագրված Շուշիից ու հարակից 5-6 գյուղերից հետո ազատագրված առաջին բնակավայրն է։ Նրա ազատագրությամբ հնարավոր եղավ կայուն և մնայուն ցամաքային կապ հաստատել բուն ՀՀ տարածքի հետ և վերացնել Արցախի ադրբեջանական պաշարումը։ Այս «մարդասիրական միջանցքի» շնորհիվ իրականացավ Արցախի փաստական միավորումը Մայր Հայրենիքի հետ։

Բերձորը գտնվում է Աղավնագետի հոսանքի ձախ ափի լեռների լանջին՝ դրախտային բնության գրկում։ Նա Աղրբեջանի ամառանոցներից էր։ Այստեղ ապրում էին ծագումով քրդեր, որոնք ամբողջովին ձուլվել էին և ճեռք բերել ադրբեջանական ինքնագիտակցություն։ Այսօր Բերձորը քաղաքն ունի ավելի քան 3000 հայ բնակիչ, իսկ ամբողջ Քաշաթաղի շրջանը՝ 14 հազար, որը չափազանց քիչ է շուրջ 10.5 հազար քառ. կմ տարածք ունեցող Քաշաթաղի շրջանի համար, չհաշված հարավի հողերի աննկարագրելի բերրիությունը։ Բերձորը Քաշաթաղի շրջանի վարչական կենտրոնն է և նրա ամենամեծ բնակավայրը։ Վերաբնակիչները Հայաստանի տարբեր շրջաններից են. համեմատաբար շատ են նախկին երևանցիները, աբովյանցիներն ու եղեգնաձորցիները։ Ինչպես քաղաքի, այնպես էլ ամբողջ շրջանի վերաբնակիչների մեջ հանդիպում են հասարակական ամենատարբեր խավերի և մտածելակերպի ներկայացուցիչներ՝ ծայրահեղ ցեղակրոն ազգայ-

նականներից մինչև անհուսության պատճառով այստեղ հայտնավածներ, նորօրյա մի Արշակավան, որի բոլոր տարրերից պետք է կազմել ամրակուռ հավաքականություն: Եվ մեր ուխտագնացության ժամանակ անձամբ համոզվեցինք, որ այս գործընթացն ընթանում է բուռն թափով:

Բերձորի վերաբնակիչներն ապրում են աղբբեշանցիների լքած բնակարաններում՝ դրանք նորոգելուց հետո: Կան նաև սեփական նոր բնակարաններ: Այսուհանդերձ Բերձորում այստեղ ու այնտեղ, իսկ Քաշաթաղում համատարած հանդիպում են նախկին բնակիչների լքած տներ: Մեզ հետ եղող ազատամարտիկները հաստատում էին, որ երբ իրենք ազատագրել էին այս տարածքները, տները գրեթե վնասված չէին, իսկ հիմա նրանց կմախքն էր միայն մնացել: «Հնամյա» վերաբնակիչներից ամենախիզախները տալիս էին թալանչիների անունները:

Այստեղ հայտնենք, որ հայկական բանակը 1919-1920թթ. զբաղված էր նույնանման ալան-թալանով Կարսի նահանգում: Լավ գիտենք, թե ի՞նչ եղավ սրա արդյունքը, որի հետևանքները կրում ենք առ այսօր…:

Բերձորի վերաբնակիչներն ընդհանրապես գոհ են վարչակազմի հոգատարությունից: Այսուհանդերձ, դժգոհություններն աստիճանաբար ավելանում են վերջին ամիսներին: Մարդիկ դժգոհ են էլեկտրականության գնի բարձրացումից: Մի քանի ամիս առաջ ԼՂՀ նախագահ Արքադի Ղուկասյանն այնտեղ է ուղարկել իր մի հովանավորյալին՝ ոստիկանապետ նշանակելով. վերջինս, նախագահի մակարդակով ապահով թիկունք ունենալով, Բերձորի տնտեսավարողների միջոցով լավիր ձևերով հարկեր է պահանջում սեփական անձի համար: Վերաբնակիչներն առավելապես դժգոհում են պետական մակարդակով նման ապօրինություններից՝ ճիշտ և ճիշտ ՀՀ նման:

Բերձորը և Քաշաթաղի շրջանի ներկայումս բնակեցված շուրջ 120 բնակավայրերից (նախկին 250-ի դիմաց) մոտ 85-90-ն ապահովված են մշտական էլեկտրամատակարարմամբ: Շուրջ 30 բնակավայր գուրկ է էլեկտրականությունից, ինչն ունենալու համար հարկավոր է ծախսել ընդամենը 60 միլիոն դրամ (շուրջ 100 հազար գոլար), այսինքն՝ երկանյան նորահարուստի կամ գող պետական մի պաշտոնյայի «Մերսեղեսի» գինը: Նկատի ունենալով,

որ շրջանում շատ գետեր ու գետակներ են հոսում, կարելի է նաև կառուցել փոքր ջրէլեկտրակայաններ: Կա նաև վառելիքով աշխատող էլեկտրածիններով (գեներատոր) էլեկտրականություն արտադրելու տարբերակը: Եթե վերջին առաջարկով դիմեցի պ-ն Հակոբյանին, նա բացատրեց. «Մենք գեներատորներ տվել ենք այդ գյուղերին, նաև սալյարկա, բայց մարդիկ նախընտրում են սալյարկան օգտագործել տրակտոր կամ կոմբայն վարելու կամ բերքը բեռնատարով Կապան փոխադրելու համար»: Այս բացատրությունը ոգեսորեց ինձ, քանի որ վերաբնակիչները նախընտրում էին էլեկտրականություն ունենալու փոխարեն աճեցնել բերք և վաճառել այն: Սակայն մի գյուղացի խոստովանեց ինձ. «Ախսպեր ջան, Էնքան սալյարկա են տալիս, որ կարող ենք օրական մեկ-երկու ժամ միայն էլեկտրականություն ունենալ: Ո՞ւմ է դա պետք: Ավելի լավ է սալյարկան հողի վրա ծախսենք»:

Բերձորի հասարակական կյանքում գդալի դեր ունի ԱՃՊ հասարակական նախաձեռնության անդամ «Մունք» ազգային ակումբը, որը զեկավարում է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Կյուրեղյանը: «Մունքը» կազմակերպում է դասախոսություններ, վիճաբանական ասուլիսներ, նոր հրատարակված գրքերի ներկայացումներ ինչպես Բերձորում, այնպես էլ ազատագրված մյուս բնակավայրերում:

Բերձորում գործում են հանրակրթական և երաժշտական դպրոցները: Ամբողջ Քաշաթաղում գործում է 51 դպրոց, որոնցից ոչ բոլորն են հագեցած ուսուցիչներով, գրենական պիտույքներով, դասագրերով և դպրոցական այլ անհրաժեշտ պարագաներով: Բայց մարդիկ աշխատում են չտեսնված նվիրումով:

2002 թ. հունիսի 22-ի շաբաթ առավոտյան նկատեցինք, որ նոր գեմքեր էին միացել խմբին գիշերն ու առավոտյան. «Ղարաբաղ» կոմիտեի երբեմնի անդամ, ներկայիս «Մոցիալիստական Հայաստան» միավորման ղեկավար Աշոտ Մանուչարյանը, ուսուախու հայկական էությանն անհաղորդ մարդիկ (հատկապես կանայք), խորհրդավոր անձնավորություններ Մանկտ Պետերբուրգից:

Այսօր ուխտավորների խումբն ու նորահայտ անձնավորություններն ուղևորվեցին հարավի ազատագրված տարածքներ: Այնտեղ հասնելու համար հարկ եղավ Բերձոր-Գորիս ճանապար-

Հով գնալ մինչև Խնձորեսկ գյուղի ճամփարաժանը, ապա Խնձորեսկով ուղևորվել հարավ՝ Լեռնային Հողատարածքների մեծ մասն անմշակ էր. մի փոքր մասում ցանված էր ցորեն, գարի կամ առվլույտ։ Խնձորեսկից 1 ժամ կիսաքանդ ճանապարհով ընթանալուց հետո կանգ առանք մի բոլորակի մոտ, ուր մի յուրօրինակ պարզունակ խաչքար էր տեղադրված՝ «1994 – Հողը դարավոր է, գործը՝ փառավոր» արձանագրությամբ։ Բոլորակի ձախ կողմում ջերբայիլի շրջան տանող կիսաքանդ ճանապարհն էր, որի աջ մասում գտնվում էր Հայոց բանակի մի զինվորական կետ։ Զըռցում եմ զինվորների հետ. երկուսն էլ զինակոչիկներ են, մեկը՝ Երևանից, մյուսը՝ Հարազդանից։ Հարցնում եմ իրենց մննդի, ապրելու պայմանների և այլնի մասին։ Այս բոլորից գոհ են, միայն թե կառուում են իրենց ընտանիքներին ու ընկերներին։

Քիչ հետո պարզվեց, որ այս բոլորակը երկու կիլոմետր այն կողմ՝ Որոտան գետին գտնվող Սանասար քաղաքի (Նախկին Կուբաթլի) մուտքն էր։ Քաղաքն ամբողջովին ավերակ է, տեղադրել՝ նույնիսկ Հիրոշիմա։ Ոչ մի շունչ։ Նախկին այգիներում այսօր տիրություն են անում միայն օձերը, որոնք այնքան առատ են ազատագրված տարածքներում։ Սանասարի զորանոցի մոտ կանգնած են շատ հավանաբար զորակոչիկներին այցի եկած հարազատների ավտոմեքենաներ։ Զորանոցից հետո ճամփան շարունակում ենք գետի ձախ ափով, մինչև հասնում ենք մի կամքի, որն անցնելուց հետո գետի մյուս ափով շարունակվող քիչ-շատ բարվոք ճանապարհով ուղևորվում ենք հարավ։ Վերաբնակիչներ հազվադեպ են պատահում (նրանց գոյության մասին վկայում են ծածկված երդիկ ունեցող տները)։ Անցնում ենք մասսամբ վերաբնակեցված Հալլե գյուղի մոտով, ապա՝ Մամակ ավերակ գյուղով։ Ամենուր անմշակ բլուրներ ու բլրակներ են. միակ հարթ տարածությունը 2-3 կիլոմետր լայնքով Որոտանի հովիտն է՝ փարթամ կանաչով ու մրգատու ծառերով լեցուն, որոնք անտեր են, առանց խնամողի և փայրիացել են։ Վերջապես ճանապարհի աջ մասում տեսնում ենք մի մշակված դաշտ, որի ոսկեգույն ցորենը հնձում էր կոմբայն։ Զախ մասում սկսում են հաջորդել գորշ, լերկ, արևակեզ լեռներ ու բլուրներ։ Որքան ընթանում ենք դեպի հարավ, տոթն այնքան ավելանում է։ Ճանապարհի երկու կողմերին անընդհատ երևում են ավերակ, օձաբների վերածված տներ։ Ժա-

մը մեկին հասնում ենք ճամփաբաժանին: Ուղիղ ճանապարհը տանում է Մեղրի, բայց մենք թեքվում ենք աջ: Այս մասում կա ավելի քան 3 հազար հեկտար տարածությամբ մի դաշտ, որի շատ չնչին մասն է ցանքած: Զախ մասում ևս կան անմշակ տարածություններ: Ի՞նչ բերք ասես, որ չեն տալիս այս հողերը, որոնք այսպես թողնելը պարզապես դավաճանություն է, համագույշին ամոթ, մշտական խարան այսօրվա հայության համար...:

Սկսվում են խաղողի վայրի հացած կամ արևահար, այսօր արդեն օձերի որջ դարձած այգիները: Նրանց հաջորդում է մի ճամփաբաժան, որից հետո՝ ճանապարհի աջ մասում, տուֆաքարով կառուցված ցուցանակ է՝ «Կովսական»: Այստեղից սկսվում է վայրէջը, որի վերջում Հաքարի գետի կամուրջն է. այն անցնելով, մտնում ենք Կովսական (նախկին Զանգելան) քաղաքը: Կովսականն ազատագրված հարավի ամենալիա բնակեցված բնակավայրն է՝ 130-140 ընտանիք՝ շուրջ 700 հոգի: Այստեղ և Վարդանանց գյուղում հանդիպեցինք ամենահայրենասեր մարդկանց, որոնց զգալի մասը պատկանում էր իգական սեռին: Օրինակ՝ Գյումրիից չորս տարի առաջ տեղափոխված Նարինեն լսել անդամ չէր ուզում տարածքները վերադարձնելու մասին. «Ո՞վ կարող է ստիպել, որ ես թողնեմ այստեղի իմ տունը՝ Կովսականը: Եթե պետք լինի, առաջին գծում ե՛ս կկովեմ»: Մեկ ուրիշը՝ Կովսականի դպրոցի ուսուցչուհի՝ Երևանից տեղափոխված տ-ն Քնարիկը, նույնն էր հաստատում: Մեր զրույցը լսող նախկին մի եղեգնաձորցի ավելացրեց. «Ազգուտակով կոտորելու եմ բոլոր նրանց, ովքեր կփորձեն իս տարածքները թշնամուն հանձնել»: Կովսականի շրջանում գտնվում է նաև լիբանանահայ վերաբնակիչների Դիցմայրի գյուղը, որը տեսնելու ժամանակ չունեցանք:

Կովսականի դպրոցն ունի շուրջ 90 աշակերտ, որտեղ հաճախում են նաև մոտակայքի երեք գյուղի երեխաները: Այստեղ է գտնվում ամբողջ հարավի միակ բուժարանը, որը պաշտոնապես կոչվում է «ամբուլատորիա, ծննդատուն»: Հյուրերին դիմավորում են աղուհացով, որն օրհնում է Հայր Աթանասը:

Մտնում ենք ամբուլատորիա-ծննդատուն և զրույցում գլխավոր բժիշկ Գագիկ Ներսիսյանի և բժշկուհի Գայանե Թովմասյանի հետ: Երկուսն էլ Երևանից են, երկուսն էլ մանկաբույժ: Բժշկական անձնակազմը 35 հոգի է: Նրանցից բժիշկ են միայն Հիշյալ երկու-

սը, մյոււսները մանկաբարձ և բուժքույր են: Այս միակ «Հիվանդանոց» ունի անհետաձգելի կարիքներ. հարկավոր են թեկուզ պարբերաբար այցելող կանացի բժիշկ, վարակաբան և ճառագայթաբան բժիշկներ, սակայն անհետաձգելի է մշտական վիրաբույժ ունենալը (մանր-մունր վիրահատությունները կատարում են մանկաբույժները...), վիրաբուժական գործիքների, հիվանդասենյակների և բժիշկների սենյակների, ինչպես նաև ձմրան համար ջեռուցիչ սարքավորումների մեծ պահանջ կա: Կարիքներից ո՞ր մեկը թվարկես...: Ամբովատորիայի սենյակներից մեկում պառկած են երեք հոգի, որոնցից երկուսին՝ հինգ տարի առաջ Գյումրիից տեղափոխված Սմբատ Կիրակոսյանին և Եղեգնաձորից տեղափոխված Ահարոն Գրիգորյանին նախորդ օրը խայթել էին այս շրջաններում վիստացող «գյուրզա» օձերը: Ուրախալի լուրեր ստացանք ծննդատան բաժնում, որը բացվել է անցյալ տարի սեպտեմբերին: Անցած ամիսների ընթացքում այստեղ ծնվել է 80 երեխա, որոնցից 28-ը միայն այս տարի, ևս երեքը ծնվել են տնային պայմաններում: Մրանցից 4-ը (բոլորն էլ տղա) ծնվել են կրկնակի հաղթանակների տարեգարձի օրը՝ մայիսի 9-ին: Մահճակալներից մեկում պառկած էր չորս տարի առաջ այստեղ վերաբնակված Գայայանե Տոնոյանը երեք օր առաջ ունեցած իր հինգերորդ զավակի հետ (հինգն էլ տղա...), որին անուն դեռ չէին տվել, թեև մայրը փափագում էր նրան կոչել Վարդան: Ի դեպ, 4-5 երեխայով ընտանիքները սովորական են ոչ միայն կովսականում, այլև ազատագրված տարածքներում: Այս փաստը ևս նկատի ունենալով՝ կովսականի եռանդուն քաղաքապետ Խաչիկ Աղամյանը բազմիմաստ հայտարարեց: «Մեզ մոտ բերքատվությունը շատ բարձր է բոլոր առումներով՝ թե՛ մարդկանց և թե՛ հողի»: Մանկական մահացության որևէ դեպք չի արձանագրվել: «Հիվանդանոցն» աչքի էր ընկնում մաքրությամբ:

Անցած տարիների ընթացքում կովսականում մահացել է հոգի, որոնցից 3-ը թաղված են այստեղ: Սա նշանակում է, որ այս հողը կրկին հայանում է նաև հարազատների շիրիմներով: Մի ուշագրավ երեւոյթ ևս ազատագրված բոլոր տարածքներում և մասնավորապես Յերձորում ու Կովսականում, բոլորը գործածում էին բնակավայրերի հայկականացված անունները, իսկ երբ հյուրերից որևէ մեկը սայթաքում և արտասանում էր դրանց աղբբե-

ջանական անունները, նրբանկատորեն ուղղում էին նրա սխալը։ Սա մանրուք չէ, այլ հույժ կարևոր մի գործոն, քանի որ հայրենիքները դառնում են այդպիսին ոչ միայն այնտեղ բնակություն հաստատելով, այն տնտեսապես յուրացնելով, այլ առաջին հերթին այն հոգեոր և մշակութային ոլորտներում յուրացնելով, սեփականացնելով, նրա հետ հոգեպես միաձուլվելով, այն սեփական էության անբաժան մասը դարձնելով։

Մեր հաջորդ ուխտավայրը Միջնավան (նախկին Մինչևան) քաղաքն էր՝ Արաքսից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա։ Կովսականից Միջնավան 7-8 կիլոմետր է։ Արաքսի այս ափամերձ տարածքը իսկական դրախտ է գյուղատնտեսության համար։ Ի՞նչ ասես, որ չի աճում այստեղ մերձարևադարձային կիբմայի շնորհիվ։ Խաղող, թութ, թուզ, ընկույզ, բանջարեղեն, ձմեռուկ, նույնիսկ կիտրոն, նարինջ, արքայանարինջ (խուրմա)։ Միջնավանցիները հաստատել են այստեղ 6-6.5 տարի առաջ։ շտերը հիմնավորվել են վերջնականապես և որևէ պայմանով հեռանալու մտադրություն չունեն։ Հիմնականում տեղափոխվել են երեանից, Արտաշատից ու Եղեգնաձորից և զբաղվում են գյուղատնտեսությամբ։ Նրանք, ինչպես նաև կովսականցիները, տանում են իրենց բերքը 35-40 կմ հեռավորությամբ գտնվող Կապան, ուր վաճառում են «ջրի գնով»։ Միջնավանցիները դժոհում էին երկու բանից՝ էլեկտրականության գնի բարձրացումից և շրջանում բերքի վերամշակման կամ պահածոյացման որևէ գործարանի կամ նույնիսկ արտադրամասի բացակայությունից։ Քաղաքի պահակային ծառայության աշխատակից Մերուժան Սարգսյանը մեր միջոցով խնդրեց սկյուռքահայերին՝ շրջանում հիմնելու նման գործարան կամ արտադրամաս։ Իսկապես, եթե լինեն նման ներդրողներ, ներդրումը ոչ միայն շուտ կհատուցվի, այլև մեծ շահույթ կբերի՝ նկատի ունենալով հողի աներևակայելի բերքատվությունը և միջնավանցիների աշխատամիրությունը։

Միջնավանը հաղորդակցության առումով ավելի բարփոք վիճակում է, քան Քաշաթաղի մյուս բնակավայրերը՝ բացառությամբ Բերձորի։ Այս տողերի՝ մամուլում տպագրվելու օրերից միջնավանցիք արդեն ուղիղ հեռախոսակապով հաղորդակցվում են երեանի, Ստեփանակերտի և աշխարհի հետ։ Մյուս կողմից, շաբաթը երկու անգամ ավտոբուս է աշխատում ուղիղ դեպի երեան։

Միջնավանի մոտակայքում՝ Յ կմ հեռավորության վրա գտնվում է Վան գյուղը, որի երեխաները ևս հաճախում են Միջնավանի դպրոցը: Երբ հասանք Միջնավանի դպրոցը, մեզ տհաճ անակնկալ էր սպասվում: Թեև մի փոքրիկ մեզ աղուհացով ընդունեց, այսուհանդերձ, անձնապես ես և շուրջ 10 հոգի բոյկոտեցին քաղաքի այս դպրոցը Գալինա Ստարովոյտովայի անունով կոչելու միջոցառումը: Աչա այստեղ պարզ դարձավ, թե ովքեր էին գիշերն ու առավոտյան հայտնված Աշոտ Մանուչարյանը և ոռոսախոս կասկածելի կերպարները և ինչո՞ւ է էին ուղեկցում ուխտավորներին: Փոխանակ ազատագրված Միջնավանի այս դպրոցը կոչելու Լեռնիդ Ազգալզյանի (որի նահատակության տասնամյակը լրացել էր նախորդ օրը), Արցախ աշխարհի ծնունդը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանցի (որի մահվան հիսնամյակն էր նախորդ օրը) կամ մեկ այլ նվիրյալի անունով, Ալեքսան Հակոբյանը, Աշոտ Մանուչարյանը և ընկերները կոչել են այն մի գործչի անունով, որի համար արցախյան պահանջատիրությունը առերևույթ միջոց էր Ռուսաստանի ժողովրդավարացման համար, մինչդեռ հայության համար Արցախը էր, է և մնալու է նպատակ: Զընկնելով Սանկտ Պետերբուրգի այս շրջանակների պատրաստած թակարդը, նախընտրեցինք զրուցել վերաբնակիչների հետ և հիանալ տեղի բնությամբ:

Միջոցառման ավարտին բոլորն ուղեկորվեցին դեպի ափամերձ մի տարածք, որտեղ հավուր պատշաճի սեղան էր բացված: Սեղանը, ինչպես միշտ, օրհնեց Տեր Աթանասը: Այստեղ Արցախ Բունիաթյանը ցավով հայտնեց, որ Միջնավան թափանցել են մի քանի աղանդներ, որոնք «ավեր են գործում»: Մեզ համար սա հասկանալի էր, քանի որ իրանի և Արաքսի մերձակա այս տարածքում հայաշունչ և ոգեղեն մի ամրակուռ հավաքականության գոյությունը ծայր աստիճան աննպաստ գործոն է շրջանում ամերիկյան հաշիվների համար...:

Այնուհետև Միջնավան-Հորադիկ համեմատաբար լավ ճանապարհով ընթանում ենք դեպի Արաքս: Ափամերձ տարածքն ունի գերազանց պայմաններ գյուղատնտեսության համար՝ ջրի առատություն, բերրի հող, մերձարևադարձային կլիմա...: Հայկական աշխատասիրությունից ու կազմակերպված աշխատանքից բացի ուրիշ ի՞նչ է հարկավոր այս լքված, բերրի տարածքները գյոււ-

դատնտեսական ոսկեհանքի վերածելու համար: Ո՞ւր է հայությունը, ինչո՞ւ չի շարժվում, ինչո՞ւ չի վերադառնում իր հայրենիքը և շենացնում այս ազատագրված տարածքները: Մի՞թե հավերժ դատապարտված ենք հեռվից սիրելու Հայաստանը և «Հեղափոխականանալու» երկու-երեք բաժակ խմելուց հետո: Հողը կանչում է ձեզ, ո՞ւր եք: «Հիմի է՞լ» պիտի թշնամուն թողնենք հայրենի տարածքները:

Ճանապարհից թեքվում ենք ուղիղ դեպի աջ և ընթանում դեպի Արաքս: Մեր դիմացը պատմական Պարսկահայք նահանգի Պարսպատունիք գավառի լեռներն են (ներկայիս Ղարադաղ՝ իշրանի տարածքում): Հատում ենք Նախիջևան-Բաքու երկաթգիծը և հողածածկ ճանապարհով շարունակում ընթացքը դեպի Արաքսի վրա գտնվող Խուզափերինի երեք կամուրջները: Մեր աջ կողմում իրանցիները կառուցում են ամբարտակ Արաքսի վրա՝ Խուզափերինի կամրջից 1 կմ եեպի արևմուտք՝ առանց աղբբեջանցիների կարծիքը նույնիսկ հարցնելու: Ամբարտակի կեսն արգեն կառուցված է, Արաքսի հունը՝ շուրջ 50 մետր, փակված է կիսով չափ: Ասում են՝ եթե կառուցվի ամբարտակը, նրա հետին մասում առաջանալու է 20 կմ երկարությամբ մի լիճ, որն իր ջրերի տակ թաղելու է Նախիջևան-Բաքու երկաթգիծը և նրա հետ՝ ամերիկյան հաղորդակցային ու տարածաշրջանային այլ ծրագրեր: Ամբարտակի վրա կառուցվելիք էլեկտրակայանը կարող է բավարարել հայ վերաբնակիչների էլեկտրականության, իսկ ամբարտակի ջրերը՝ նաև գյուղատնտեսության պահանջները: Նման պարագայում հիմնովին տապալվում են բոլոր ծրագրերը Մեղրու միջանցքի վերաբերյալ:

Մեկ խոսքով, Արաքսի վրա այս ամբարտակի կառուցմամբ, իշրանցիներն աշխատում են տապալել ամերիկյան-թուրքական հակահայկական-հակաիրանական ծրագրերն այս տարածաշրջանում:

Խուզափերինի կամուրջները երեքն են՝ մեկը մյուսից 700-800 մ հեռավորությամբ: Առաջինը ներկայիս կիսավեր կամուրջն է՝ կառուցված 13-րդ դարում, մյուսը կառուցված է 18-րդ դարում և կանգուն է, իսկ երրորդը երկաթյա (զինվորական) կամուրջ է:

Առաջին կամրջին հասանք ժամը 16:25-ին: Բոլորն իջան փոխադրամիջոցներից և նետվեցին Արաքսի հորձանուտ՝ պղտոր ջրերի մեջ: Շատ-շատերի համար սա առաջին համբույրն էր մայր

գետի սուրբ ջրերի հետ։ Հայր Աթանասին աղոթք էր մրմնչում։ Անհնար է նկարագրել այն զգացումները, որ ունեինք Արաքսի ջրերը մտնելիս։ Երևի նման զգացումներ մեկ էլ կունենանք ազատագրված Եփրատի, Տիգրիսի ջրերում կամ Մասիսի սեղ կատարին։ Ահա այստեղ էությանդ ամեն մի բջիջով զգում ես, որ դու ՀԱՅ ես և դատապարտված ես այդպիսին լինելու։ Լսում ես Շահ Աբասի կողմից քշված հայրենակիցներիդ ողբն ու կականը, տեսնում ես Սայր Հայաստանի արտասուքը…։

Թռչունները բույն են շինել ավերակ կամրջի տակ և խինդով ու ճուղոյունով սնունդ են բերում իրենց ձագերին։ Այս տեսնելով, ակամա տարգում եմ մի մտքով, թե մայր Հայության թռչունը ի՞նչ սնունդ պետք է տանի իր աշխարհասակյուռ զավակներին, որպեսզի նրանք վերադառնան իրենց բույնը՝ Հայաստան աշխարհ։ Մտածում եմ՝ մի՞թե այս թռչունն իր բնազդով գործում է ավելի ճիշտ, քան մենք՝ մեր խելքով և անսպառ ներուժով։

Նայում եմ շուրջս։ Մեծ ու փոքր, կիս, երեխա թե տղամարդ, աշխարհական թե կրոնավոր՝ կլանված են Արաքսով։ Մեկն աղոթում է, մյուսը ջուրը թափում է զլիսից և ինքնամկրտվում, երրորդը լալիս է, չորրորդը աչքերով խորասուզվել է ջրերի մեջ… Վերերկրային, հիանալի՝ տեսարան է։

Մի խոսքով, այս պահից բոլորս մկրտվում ենք Հայկականության կենարար ու մաքրող ջրով։

Արաքսի մեջ մնում ենք շուրջ կես ժամ։ Ոչ ոք չի ուզում հեռանալ։ Ինչո՞ւ հեռանալ, երբ հազիվ գտել ենք իրար։ Բուն ՀՀ սահմանի վրա իրավունք չունենք Արաքսին մոտենալու, ուր մնաց՝ նրա ջրերին գրկախառնվելու։ Զէ՞ որ Հայաստանի սահմանների պաշտպանությունը հանձնված է Ռուսաստանին, իսկ ուստի ինչպես սկարող է հասկանալ Հայի ցավը, սերն ու հավատը, Արաքսի նշանակությունը Հայի համար։ Նրանը մայր Վոլգան է, Մոսկվա և Նևա գետերը, Ենիսեյը. Լենան, Անգարան…

Այստեղ՝ Արաքսի այս ափին, միայն հայոց բանակի աշալուրջ սպաներն ու զինակոչիկներն են, իսկ այն ափին՝ իրանցի ամբարտակաշխարհները։ Վերջիններս, դիտելով մեզ մի քանի տասնյակ մետր հեռավորությունից, կարծես չէին զարմանում՝ տեսնելով մեզ պատած սրբազն խենթությունը…։

Վերջապես շարժվում ենք դեպի մյուս կամուրջները։ Կանգ

Ենք առնում վերջին՝ երրորդ կամրջի մոտ: Այստեղ հայոց բանակի մի ամուր դիրք հսկում է հայրենիքի սահմանները: Այս տարածքների հայոց զորամիավորումների հրամանատար փոխգնդապետը հայտնեց իր կարծիքը արցախյան հիմնահարցի կարգավորման մասին. «Այս սերունդը չի կարող լուծել Արցախի հարցը: Թող սպասեն մյուս սերունդներին: Ալիևը կամ Աղրբեջանի որևէ դեկավար պիտի ասի իր ժողովրդին. «Ժողովո՛ւրդ, մենք պարտվել ենք, գնացեք վերցրեք մեր Հողերը»: Իսկ մենք պետք է ասենք. «Ժողովո՛ւրդ, սա մեր Հողն է, պարտավոր ենք նրան տեր կանգնելու և պաշտպանելու»: Փոխգնդապետը եղրակացրեց. «Այնքան ժամանակ, որ այստեղ հայերն են ապրում՝ սա մեր հայրենիքն է»: Ուշադրություն դարձնենք փոխգնդապետի «Այնքան ժամանակ, որ այստեղ հայերն են ապրում» արտահայտությանը: Տեսականորեն, հայոց հայրենիքը բացարձակ, հավիտենական արժեք է, այսինքն՝ հայոց հայրենիքը այդպիսին եղել է, կա ու պիտի մնա՝ անկախ այն բանից, որ նրա այս կամ այն մասում այսօր հայեր ապրո՞ւմ են, թե ոչ: Սակայն, փոխգնդապետի խոսքերում կա նաև բացարձակ ճշմարտություն. հայրենիքը հայրենիքը դառնում է այնտեղ ապրելով, այնտեղ արարելով, այնտեղ մեռնելով և այնտեղ թաղվելով, պլատոնական սիրով հայրենիքներ չեն լինում: Այս ճշմարտությունը, ցավոք, ընկալելի չէ հայության ստվար հատվածի համար:

Ժամը 19:25-ին Խուղափերինի երրորդ կամրջի մերձակայքից շարժվում և ուղղություն ենք վերցնում դեպի դեպի արևելք՝ Հորադիք, որը զինադադարի սահմանն է Արաքսի ափի մոտ: Շուրջ 20 կիլոմետր անապատի վերածված տարածություն է. հանդիպում ենք մի խփած տանկի կմախքի, ավերակ մի քանի գյուղերի և անմշակ անծայրածիր խաղողի այգիների, որոնք թողնվել են անտեր և վայրիացել: Այդ այգիներից մնացել են միայն որթերի բետոնե ցցերը, որոնք անտառի տպավորություն են ստեղծում: Ո՞վ պիտի վերստին տեր կանգնի այս անմշակ, բայց բերրի այգիներին: Հայրենիքը ազգի նախորդ, ներկա և ապագա սերունդների համայնական սեփականությունն է, իսկ սեփականությանը տիրությո՛ւն են անում: Իսկ մենք ոչ միայն թողել ենք անտեր մե՛ր իսկ սեփականությունը այն արյա՛ն գնով վերանվաճելուց հետո, այլև խումբ-խումբ, օրական հարյուրներով դիմում ենք դեպի օտար ա-

Վեր: Եթե այս վիճակը 180 աստիճանով չչըջի, բացառված չէ, որ ընդամենը մի քանի տասնամյակ հետո հայկական երկու պետությունները վերանան, որից հետո հայ ազգի գոյատեսումը ևս լուրջ հարցականի տակ կլինի:

Հասնում ենք աղբբեջանական Շուքուրբելիի ավերակ գյուղը: Այստեղ՝ խորհրդային սահմանապահների նախկին ուղեկալում, հայոց բանակի մարտիկներն են: Ամենուրեք և թթի ծառեր են: Այստեղ մնում ենք մոտ մեկ ժամ, կազդուրվում և զրուցում սպաների ու զինվորների հետ, մինչ ԱՏՊ անդամներն ուշի ուշով զննում էին տեղանքը: Նրանք ի վերջո որոշեցին իրենց ծրագրած 100 ընտանիքով գյուղը հաստատել այստեղ և այն անվանեցին Արևի գյուղ՝ նկատի ունենալով թե՛ տեղի արևշատ լինելը և թե՛ փոխաբերական իմաստով որպես հայոց արևի ծագման, այսինքն՝ հայրենիքի վերամիավորման ու արժանավայել ապագայի առհավատչյա: Այստեղ պիտի հաստատվի ուղղմականացված Արևի գյուղը, առաջին գյուղը աղբբեջանական զորամիավորումների դիմաց՝ որպես առաջապահ հայկական ամրոց ու թիկունք, վերաբնակեցված գյուղերի հուսալի ապագեն:

Զինվորները գոհ էին այստեղի իրենց ծառայության պայմաններից. սնունդը լավ է, ներքին հարաբերությունները՝ բնական: Նույնիսկ չեն դժգոհում օձերի առատություննից՝ այն սովորական երևությ համարելով:

Շուքուրբելիից մի քանի կիլոմետր արևելք Հորադիզն է՝ «սահմանը»: Մեզ խորհուրդ չեն տալիս հասնել այնտեղ, մանավանդ որ օրը մթնում էր, իսկ սահմանի մատուցներն ականապատված են:

Բոնում ենք վերադարձի ճամփան դեպի Բերձոր՝ այս անդամընտրելով ոչ թե Միջնավան-Կովսական-Սանասար, այլ Վարդանանց-Ձերբախիլի շրջանի ճամփան: Պետք է այցելենք նաև վերաբնակիչների վարդանանց (նախկին Ազմեղբեյլի) գյուղը: Այստեղ հասնում ենք 45 րոպե քարքարոտ ու քանդված ճանապարհով ընթանալուց հետո:

Ամբողջ գյուղը դիմավորում է մեզ: Այստեղ ուխտագնացներն արժանանում են ջերմագին ընդունելության: Մարդիկ պատրաստել են ճոխ սեղան, բայց չունեն բավականաչափ աթոռներ: Հոգ չէ՝ բոլորն ուրախ են: Գյուղը չունի էլեկտրականություն,

մինչդեռ դիմացը՝ Արաքսի մյուս ափին, փայլվլում են իրանական բնակավայրերի լույսերը։ Իսկապես, մարդ պետք է հերոս լինի, որպեսզի տարիներով դիմանա այս զրկանքին ու հոգեբանական ճնշմանը։ Սակայն էլեկտրականության բացակայությունը չի ընկ-ճել վարդանանցիներին։ Նրանք լավատես են ու համոզված, որ հաջորդ տարի իրենք էլ պիտի վայելեն արդի քաղաքակրթության այդ բարիքը։

Վարդանանց գյուղը հիմնադրվել է 2000թ. փետրվարին։ Ներկայումս 40 ընտանիք է ապրում այնտեղ՝ շուրջ 170 հոգի, ո-րոնցից 60-ը դպրոցականներ են։ Աճեցնում են ձմերուկ, լոլիկ, սմ-բուկ, բանջարեղեն, որոնք այստեղ եկած վաճառականները տե-ղում գնում են իրենցից։ Նախատեսված էր այս աշնանը գյուղի դպրոցն անվանակոչել Ռաֆայել հշխանյանի անունով։

Զրուցում եմ Եղեգնաձորից այստեղ տեղափոխված, գյուղում ծնված առաջին երեխայի հոր՝ Վարուժան Կարապետյանի հետ։ Մինչ այս, նա ունեցել է նաև չորս զավակ, որոնցից երեքը հաճա-խում են գյուղի դպրոցը։ «Ուրեմն դպրոցի աշակերտների հինգ տոկոսը քո երեխեքն են»,՝ կատակով հաստատում է ուխտավոր-ներից մեկը։ Վ. Կարապետյանը խոստանում է բարելավվել այս ցուցանիշը կամ առնվազն, պահպանել՝ նույնիսկ եթե վերաբնա-կիչները շատանան։ Խմում ենք այսօրյա իսկական հերոսի՝ վար-դանանցից Վարուժան Կարապետյանի կենացը։ Տարածքներ զիջե-լու մեր հարցմանն արձագանքեց այնպիսի մի ահարկու նայված-քով, որով ամեն ինչ ասվում է։ Վարդանանց հասանք աղջամուղ-ջին և նրան հրաժեշտ տվեցինք լուսնի լույսի տակ՝ ժամը 22:20-ին։ Ուխտավորների շարասյունը վերադարձավ Բերձոր Ձերքալիի շրջանի քանդված ճանապարհներով՝ առանց դադարի անցնելով շրջանի Տիգրանավան, Ուռենի, Գետափ, Սարատակ և Հաքարի վերաբնակեցված գյուղերի մոտով, որոնց տների էլեկտրական լույսերը փայլվլում էին։

Կիրակի, 22 հունիսի 2002։ Ուխտագնացության վերջին օրն է։ Նախաճաշից հետո ուղերժում ենք Բերձորի երաժշտական դպրոց, որի տնօրենը Արմեն Բալասանյանն է։ Դպրոցի փոքր սրա-հում տրվում է համերգ ի պատիվ ուխտավորների։ Կատարում են դպրոցի ժողովրդական գործիքների համույթի անդամները, որոնք նվագելու դասեր են տալիս շնորհալի երեխաներին իրենց գործիք-

Ներով: Պարմանուշի Արեգնազ Արշակյանը հանդես է գալիս երդով։ Խմբավարն Արմեն Բալասանյանն է։ Այս ելույթը համոզեց մեզ, որ Բերձորի ժողովործիքների համույթը կարող է բարձր պահել հայության պատիվը նույնիսկ միջազգային բեմերում։

Համերգից հետո ուղևորվեցինք Ս. Համբարձում եկեղեցի։ Պատարագն սկսվել էր։ Հայր Աթանասը պատարագիչն էր։ Դպրաց դասը բաղկացած էր 10 պարմանուշիներից, 3 կանանցից և մեկ երգեհոնահարուհուց։ Եկեղեցում գտնվողները քիչ էին՝ 20-25 հոգի՝ մեծ մասմբ տարեցներ։ Հայր Աթանասը, ըստ իր սովորության, մի ոգեշունչ քարոզ կարդաց, որը ներծծված էր հայրենասիրությամբ, ազգասիրությամբ և այդ երևույթների ամրապնդման մեջ Հայ եկեղեցու գերի շեշտադրությամբ։ Նա ասաց. «Երեկ մենք գրկախառնվեցինք մայր Արաքսի հետ։ Նա ուրախ էր, որ իր ծոցում գրկում է իր զավակներին։ Անկախության և ազատության չնորհի՛կ է, որ հնարավոր եղավ գրկախառնվել Արաքսի հետ»։ Հայր սուրբը Ավետարանի «Տիրող և ծառայի առակի» հիման վրա կոչ արեց յուրաքանչյուրին՝ հօգուտ ազգին և հայրենիքին ծառայեցնել Աստծո կողմից տրված չնորհները։ Նա հորդորեց տեր կանգնել «Մեր հողին»։ «Երեկ մենք շրջեցինք մեր արյունով գնված մեր հողում։ Այդ հողը սպասում է իր տիրողը, և դա համազգային խնդիր է, յուրաքանչյուր հայի խնդիրը»։ Քարոզիչը կոչ արեց մեր մեջ արթուն պահել ազգի ողին. «Վա՛յ նրան, որ մտածում է միայն սեփական շահի մասին»։ Նա պատգամեց չհուսահատվել, այլ հավատալ գալիք պայծառ օրերին. «Մեր անկումներին հաջորդել է բարձրացումը, հարությունը»։ Հայր Աթանասն իր քարոզն ավարտեց մեկ անգամ ևս հայությանը սիրո և միաբանության կոչելով։ Ապա կատարվեց հոգեհանգստի կարգ։ Խնդրվեց հոգու հանգստություն նաև արցախյան ազատամարտի նահատակների և, մասնավորապես, Լեռնիդ Ազգալդյանի, ինչպես նաև երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյանցի հոգիների համար՝ մահվան տասնամյակի եւ հիսնամյակի առթիվ։

Ապա ուխտավորների շարասյունն ուղղվեց Ծիծեռնավանք։ Նախ իջանք դեպի Աղավնագետի կամուրջը, որտեղից գետի հունի ձախակինյա հողածածկ քարքարոտ ճանապարհով ուղևորվեցինք հյուսիսից։ Լեռնային ամենի զանգվածները ճեղքող Աղավնագետի հովիտն ունի գերազանց պայմաններ անասնապահության

Համար, սակայն, ցափոք, այստեղ ևս վերաբնակիչները շատ քիչ են: Նրանք արածեցնում են տափար կամ ցանում բանջարեղեն: Ձախ մասում երևում են մի գյուղի ավերակներ՝ 50-60 տուն: Այս ուղղության վրա առաջին վերաբնակեցված գյուղը Մելիքաշենն է (Նախկին Սուլթանքենթ): Ժամանակին գյուղը եղել է Քաշաթաղի կառավարիչ Մելիք-Հայկազյանների իշխանանիստը:

Հասնում ենք Ծիծեռնավանք, որը գտնվում է Աղավնագետի հունի անմիջապես աջ մասում՝ մի բլրի վրա: Կողքին համանուն գյուղն է՝ վերաբնակիչներով բնակեցված: Ոմանք կարմրախայտ ձուկ են որսում գետում:

Ծիծեռնավանքի՝ 4-րդ դարի հայկական հնագույն եկեղեցիներից մեկի վերանորոգումը իր վերջնական փուլում է: Մեր ուխտագնացության օրը կատարվում էին արտաքին երեսպատման և վերջնական հարդարման աշխատանքները, և սկսվել էր վանքի արտաքին պարսպի վերանորոգումը: Մի հուշաքար հայտնում էր, որ վերանորոգումը կատարվում է Բոստոնից Զորջ և Քերոլայն Նաճարյանների մեկենասությամբ՝ ի հիշատակ իրենց ծնողների:

Ալեքսան Հակոբյանը մանրամասն տեղեկություններ է տալիս Ծիծեռնավանքի Ս. Գևորգ եկեղեցու մասին: Խսկապես որ մի եզակի ճարտարապետական կառույց է: Լստ ավանդության՝ Հովհաննես Մկրտչի ճկույթը թաղված է այստեղ: Եկեղեցու ներսում և դրսում կան 7-8-րդ դարերի պարզագույն խաչքարեր և խաչքարերի բեկորներ. նրանց մեջ եղակի է «Թուչունի խաչքարը»: Պատերի վրա կան արձանագրություններ, խաչերի, հնգաթե և վեցաթե աստղերի քանդակներ, որմնանկարներ, ինչպես նաև հայ և աղրբեջանցի վանդալների խզբանքներ:

Ագռավաքարի առասպելը կապված է Ծիծեռնավանքի հետ: Լստ Ալեքսան Հակոբյանի՝ եկեղեցուց 150 մետր արևելք՝ լեռան վրա գտնվող ժայռն էլ այդ Ագռավաքարն է:

Ծիծեռնավանք գյուղը թեև փոքր է՝ հազիվ 80-90 հոգի, բայց ունի դպրոց Վարագ Առաքելյանի անունով, ուր հաճախում են նաև Մելիքաշենի և մյուս մոտակա վայրերի վերաբնակիչների երեխանները. նրանք այստեղ գալիս են ոտքով՝ կտրելով մի քանի կիլոմետր ճանապարհ:

Ժամը 17-ին մոտ շարժվեցինք ետ՝ գեպի Բերձոր: Ճանապարհին ջուր խմելու նպատակով կանգ առանք Մելիքաշեն գյուղի

տներից մեկի մոտ, որտեղ երևաց 40-45 տարեկան մի կին: Երբ հարցը եցինք կենցաղային պայմանների մասին, երևանից 4 տարի առաջ վերաբնակված այս կինը դժբոհությամբ հայտնեց. «Հստեղ ապրելու տեղ չի»: Նա ցույց տվեց մոտակա մի տուն՝ ավելացնելով, որ նրա տերերը վերադարձել են երևան: Կինը դժբոհում էր մասնավորապես Ծիծեռնավանքի դպրոցի ցածր մակարդակից. «Երեխներս ի՞նչ են տեսնում հստեղ, ի՞նչ են սովորում հստեղ, ոչի՞նչ»: Հայկական ավանդական նախանձախնդրությունը կրթության և գիտելիքի նկատմամբ արտահայտվեց այս կնոջ վրդով-մունքի մեջ...

Ժամը 20:00-ին ուխտավորները, չափազանց հոգնած, բայց և անշափ գոհ, նստում են միկրոավտոբուսներն ու ավտոմեքենաները և բռնում վերադարձի ճամփան դեպի երևան: Երևան հասնում ենք երկուշաբթի, 2002-ի հունիսի 24-ի վաղ առավոտյան:

Ամփոփելով Հայտնենք հետեւյալը.

Ես ունեմ մի մեծ երազ՝ առնվազն 50 հազար երիտասարդ սփյուռքահայերի հաստատումն ազատագրված հողերի վրա: Միայն այդ պարագայում կտապալվեն հակահայկական ծրագրերն ու պարտվողական խոսակցությունները փոխզիջումների մասին: Ինչո՞ւ ուրիշ ժողովուրդների հաջողվում է կատարել մեծ ծավալի հայրենադարձություն, իսկ մեզ մոտ միայն արտագաղթն է ստանում մեծ ծավալ:

Ես մի մեծ երազ ունեմ և դիմում եմ իմ այն բոլոր հայրենակիցներին, որոնց մեջ գեռևս առկա է իսկակա՞ն (ոչ բաժակաճառային) հայրենասիրությունը, վերադարձե՛ք հայրենիք. եկեք տե՛ր կանգնենք մե՛ր հողին: